ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հունվարի 28-ին 90-ամյա տարիքում վախճանվել է ականավոր բանագետ, հայագետ-արևելագետ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը: Ծնվել է 1928 թ. ժամանակակից Աշոցքի տարածաշրջանի (նախկին՝ Ղուկասյանի շրջան) Ղազանչի գյուղում՝ ծագումով ալաշկերտցի և մշեցի ծնողների ընտանիքում:



1947 թ. Թբիլիսիում ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Ս. Հարությունյանն ընդունվում է ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը, որտեղ ուսումնասիրում է պարսից լեզու և գրականություն: 1952 թ. ավարտական թեզ է գրում "Պարսկերենի տարրերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերում" թեմայով, որի հավելվածը միայն կազմում էր 500 էջ: 1956 թվականից՝ ասպիրանտական ուսումնառության շրջանից սկսած, Ս. Հարությունյանի գիտական գործունեությունն ընթացել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, իսկ 1960 թ. նա փոխադրվել է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ուր աշխատում էր մինչև իր մահը:

1959 թ. Ս. Հարությունյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ "Հայ ժողովրդական հանելուկներ" թեմայով, 1971 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ "Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը" թեմայով: 1992–2007 թթ. Ս. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ գիտական գծով փոխտնօրեն էր, 2000 թվականից՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Մինչև իր մահը ղեկավարել է նույն ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժինը:

Ս. Հարությունյանի բազմամյա հետազոտական աշխատանքը նշանավորվել է մի շարք կոթողային մենագրություններով, ո-

րոնք դեռ երկար տարիներ կլինեն յուրաքանչյուր բանագետի, լեզվաբանի, մշակութաբանի և լայն առումով հայագետի սեղանի գրքերը (ինչպես, օրինակ՝ “Հայ ժողովրդական հանելուկներ”՝ 1960 և 1965, “Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ”՝ 1975, “Հայ հին վիպաշխարհը”՝ 1987, “Հայ առասպելաբանություն”, Բեյրութ՝ 2000, “Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ”՝ 2006 և այլն):

1971–1973 թթ. Ս. Հարությունյանի գլխավորած գիտական արշավախումբը ՀԽՍՀ 205 բնակավայրերից գրառել է “Սասնա ծռեր” հերոսավեպի 81 նոր պատում, որոնց մի մասը հրատարակվեց “Սասնա ծռեր” Գ (1979 թ.) և Դ (1999 թ.) հատորներով: Ս. Հարությունյանի գործուն մասնակցությամբ են կյանքի կոչվել “Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը” վերտառությամբ միջազգային շարունակական գիտաժողովները (2003–2017):

Գիտական և գիտակազմակերպչական աշխատանքին զուգահեռ՝ Ս. Հարությունյանը երկար տարիներ գլխավորել է “Պատմաբանասիրական հանդեսի” խմբագրական խորհուրդը (2006–2018), դասավանդել է ԵՊՀ-ում և Հայաստանի այլ բուհերում, բազմիցս եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում: Նրա ղեկավարությամբ են պաշտպանել իրենց թեզերը մոտ 20 գիտության թեկնածուներ և դոկտորներ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն,
Հայագիտության և հասարակական գիտությունների
բաժանմունք,
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
“Պատմաբանասիրական հանդեսի” խմբագրություն